ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» ՊՈԱԿ-ի և «Նորմա-Պլյուս» ՍՊԸ-ի միջև 2019 թվականի ապրիլի 29-ին կնքված ՀՊՏՀ-ԳՀԱՊՁԲ-19/ՀՏ-2-1 ծածկագրով պայմանագրի շրջանակներում փոփոխություն կատարելու վերաբերյալ

ք. Երևան **30 մայիսի 2019թ.**

«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» ՊՈԱԿ-ը՝ ի դեմս ռեկտոր Ռ. Հայրապետյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Գնորդ) մի կողմից, և «Նորմա-Պլյուս» ՍՊԸ-ն՝ ի դեմս տնօրեն Դ. Մարկոսյանի որը գործում է իր կանոնադրության հիման վրա, (այսուհետ՝ Վաճառող) մյուս կողմից, երկուսը միասին՝ այսուհետև կողմեր, ղեկավարվելով ՀՀ գնումների մասին օրենսդրությամբ, Գնորդի և Վաճառողի 2019 թվականի ապրիլի 29-ին կնքված N ՀՊՏՀ-ԳՀԱՊՁԲ-19/ՀՏ-2-1 ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 8.8 կետի, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին:

1. Համաձայնագրի առարկան

1.1 Կողմերի երկկողմանի համաձայնությամբ որոշեցին պայմանագրով նախատեսված «համակարգչային և պատճենահանման սարքավորումներ և օժանդակ նյութերի» ձեռքբերման պայմանագրի 1-ին, 4-րդ, 5-րդ, 11-րդ (մնացորդ՝ 42 հատ), 15-րդ և 16-րդ չափաբաժիններով նախատեսված ապրանքների մատակարարման ժամկետը երկարաձգել 30 օրացուցային օր:

1.2 Մատակարարման ժամկետը սահմանել սույն համաձայնագիրը ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 2019թվականի հունիսի 30-ը:

2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ Պայմանագրով ստանձնած կողմերի իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը կազմված է հայերեն լեզվով, հավասարազոր իրավաբանական ուժ ունեցող երկու օրինակից: Յուրաքանչյուր կողմին տրվում է սույն համաձայնագրի մեկական օրինակ:

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան » ՊՈԱԿ ք. Երևան, Նալբանդյան 128 Գանձապետարանի հաշվարկային հաշիվ 900018001876 ՀՎՀՀ՝ 01503224	Նորմա-Պլյուս» ՍՊԸ ք. Երևան, Մաշտոցի 2, տարածք 60 «Ամերիաբանկ» ՓԲԸ Հ/Հ 1570002079340100 ՀՎՀՀ 00053663
Ռեկտոր _____ Ռ. Հայրապետյան (ստորագրություն) Կ.Տ.	Տնօրեն_____ Դ. Մարկոսյան (ստորագրություն) Կ.Տ.